ԱՐՁԱՆԳՐՈՒԹՅՈՒՆ

Կոտայքի մարզի Զրառատ գյուղական համայնքի հաշվետու համայնքային ժողովի

20 հուլիսի 2012թ. Գյուղ Զրառատ

2012թվականի հուլիսի 20-ին տեղի է ունեցել Զրառատ համայնքի հաշվետու համայնքային ժողովը:

Մասնակցությամբ՝

Զրառատ համայնքի ավագանու անդամներ՝ Միրան Ալեքսանյանի, Վարդգես Ենգիբարյանի, Գառնիկ Մելքոնյանի

Զրառատի գյուղապետարանի աշխատակազմից՝ Կարինե Սարգսյանի, Էմմա Բարսեղյանի, Ժան Համբարձումյանի, Լուսինե Եղիազարյանի

ինչպես նաև համայնքի բնակիչների:

ՕՐԱԿԱՐԳ - Զրառատ համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից 2011 թվականի հոկտեմբերի 31-ից մինչև 2012 թվականի հուլիսի 20- ը ընկած ժամանակահատվածում կատարված աշխատանքների հանրային իրազեկման մասին:

ԼՍԵՑԻՆ - Զրառատ համայնքի ղեկավար՝ Արթուր Ասատրյանի կողմից 31.11.2011թ. – 20.07.2012թ ընկած ժամանակահատվածում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը: Արթուր Ասատրյանը ներկայացրեց 2011թվականի վերջին 2 ամիսների և 2012 թվականի առ 20 հուլիսի ժամանակահատվածում համայնքի ղեկավարի և ավագանու կողմից կատարված հետևյալ աշխատանքները՝

2010 թվականի դեկտեմբերի 27-ին համայնքի ավագանին իր № 27-Ն որոշմամբ ընդունել է 2011 թվականի բյուջեն, ըստ որի եկամուտները կազմել է 8555,1 հազար դրամ, ծախսերը՝ 8555,1 հազար դրամ: Հողի հարկի չափը 2011 թվականի կազմել է 634,4հազար դրամ, հավաքագրվել է 634,9 հազար դրամ, որը կազմում է տարեկան պլանի 100 % - ը: 2011 թվականի գույքային հարկերը կազմել է 250,0 դրամ, հավաքագրվել է 250,9դրամ, որը կազմել է տարեկան պլանի 100 % -ը:

2011 թվականի դեկտեմբերի 12-ին համայնքի ավագանին իր № 27-Ն որոշմամաբ ընդունել է 2012 թ. բյուջեն, ըստ որի եկամուտները կազմել են 8542,5 հազար դրամ, ծախսերը՝ 8542,5 հազար դրամ: Հողի հարկը կազմել է 434,0 հազար դրամ, որից 6 ամիսների ընթացքում հավաքագրվել է 160,0 հազար դրամ, այսինքն 6 ամսվա հողի հարկի 73,7 % -ը: Գույքային հարկերը կազմել են 250, 0 դրամ, որից անցած 6 ամիսների

ընթացքում հավաքագրվել է 129,5 հազար դրամ, այսինքն 6 ամսվա գույքահարկի 104 % -ը:

Քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության բնագավառում կազմակերպվել է համայնքի բնակիչների հաշվառում: Միջոցներ է ձեռնարկվել պաշտպանելու համայնքի բնակիչների օրինական շահերը: Կատարվել է քաղաքացիների ընդունելություն, քննության է առնվել քաղաքացիների առաջարկությունները , բողոքները և ձեռնարկվել է միջոցներ:

Ֆինանսների բնագավառում ապահովել է բյուջեի կատարումը , որի վերաբերյալ եռամսյա հաղորդումներ և տարեկան հաշվետվություն է ներկայացվել համայնքի ավագանուն: Կազմակերպվել է տեղական հարկերի, տուրքերի և վճարների գանձումն ու վերահսկումը:

Տրանսպորտի բնագավառում կազմակերպվել է Ճանապարհային անվտանգ երթևեկությունը համայնքային երթևեկության ճանապարհների և գյուղամիջյան ճանապարների վրա ապահովելու համար կատարվել է ավազի և խճաքարի փռում:

Առևտրի և ծառայությունների բնագավառում հսկողություն է իրականացվել առևտրի ոլորտում գործող օբյեկտների նկատմամբ: Տրվել է ծխախոտի և ոգելից խմիչքի վաճառքի թույտվություններ, որոնցից գանձվել է համապատասխան տուրքի գումարներ:

Կրթության բնագավառում աջակցել է հանրակրթական դպրոցի գործունեությանը:

Գյուղատնտեսության բնագավառում կազմակերպվել է համայնքի տարածքում անասնաբուժական ծառայություն: Գյուղացիական տնտեսություններին աջակցել է բարձր որակի՝ կարտոֆիլի, հացահատիկի սերմացուների և ազոտական պարարտանյութերի ձեռքբերման հարցում:

ԵԼՈՒՅԹՆԵՐ – Ելույթ ունեցան ավագանու անդամներ Վարդգես ենգիբարյանը, Գառնիկ Մելքոնյանը

ՈՐՈՇՎԵՑ - Հաշվետվությունը ընդունել ի գիտություն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա ԱՍԱՏՐՅԱՆ

20 հուլիսի 2012թ